Երկրորդ ընթերցում

Կ-1099[1]-03.06.2025-ՏՀ-011/1

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մաքսային ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-402-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «հրազեն» բառը փոխարինել «զենք» բառով:

Հոդված 2. Օրենքի 26-րդ, 28-րդ եւ 29-րդ հոդվածները շարադրել նոր խմբագրությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 26. Մաքսային մարմնի հանրային ծառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու զենքի կիրառման հիմքերը, պայմանները եւ սահմանները

1. Մաքսային մարմնի հանրային ծառայողներին թույլատրվում է իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կրել եւ պահել օրենքով նախատեսված զենք ու հատուկ միջոցներ: Նրանք իրավունք ունեն սույն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով ֆիզիկական ուժ, ինչպես նաեւ հատուկ միջոցներ եւ զենք կիրառել: Նախքան հատուկ միջոցների եւ զենքի կիրառման իրավասություն ստանալը մաքսային մարմնի հանրային ծառայողները, մաքսային մարմնի ղեկավարի սահմանած կարգով անցնում են հատուկ պատրաստություն (ուսուցում):

2. Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ եւ զենք կիրառելու նպատակահարմարությունը դիտարկելիս, ինչպես նաեւ տեսակի ընտրությունը կատարելիս մաքսային մարմնի հանրային ծառայողն առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից:

3. Մաքսային մարմնի հանրային ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ եւ զենք կիրառելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք կիրառելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու եւ ենթադրյալ հանցագործությունը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց կիրառման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ մաքսային մարմնի հանրային ծառայողի կյանքի, առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետեւանքներ:

4. Իրավախախտման վտանգավորության աստիճանից եւ դա կատարող անձի ինքնությունից, ինչպես նաեւ դիմադրության ուժից ելնելով՝ վտանգի վերացմանն ուղղված գործողությունների հետեւանքով հնարավոր վնասները մաքսային մարմնի հանրային ծառայողը պետք է հասցնի նվազագույնի:

5. Օրենքով չնախատեսված դեպքերում մաքսային մարմնի հանրային ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ զենքի կիրառումը կամ սահմանների անցումով դրանց կիրառումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

6. Մաքսային մարմնի հանրային ծառայողն իր կողմից զենքի կիրառման յուրաքանչյուր դեպքի, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կիրառելու հետեւանքով մարմնական վնասվածքի կամ մահվան բոլոր դեպքերի մասին վերադասության կարգով անհապաղ գրավոր տեղեկացնում է մաքսային մարմնի ղեկավարին, իսկ վերջինս էլ ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կիրառելու հետեւանքով մարմնական վնասվածքի կամ մահվան բոլոր դեպքերի մասին անհապաղ տեղեկացնում է գլխավոր դատախազին:

Հոդված 28. Հատուկ միջոցների կիրառումը

1. Հատուկ միջոցները մաքսային մարմնի սպառազինության մեջ ընդգրկված եւ սույն օրենքով նախատեսված տեխնիկական միջոցները (սարքերը, սարքավորումները, առարկաները, նյութերը) կամ ծառայողական շներն են, որոնց հիմնական նշանակությունը մարդկանց նկատմամբ անմիջական ֆիզիկական, հոգեբանական կամ նյութական օբյեկտների, տրանսպորտային միջոցների նկատմամբ անմիջական ֆիզիկական ներգործությունն է: Իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս մաքսային մարմնի հանրային ծառայողները հատուկ միջոցներ կարող են կիրառել՝

1) իրենց եւ (կամ) այլ անձանց վրա կատարված հարձակումը խափանելիս.

2) ենթադրյալ հանցանքի կատարման պահին կամ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում բռնված եւ փախուստի փորձ կատարող անձանց բռնելիս.

3) երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձը կամ անձինք պատրաստվում են զինված դիմադրություն ցույց տալ.

4) դիմադրություն ցույց տվող իրավախախտին վարչական ձերբակալության ենթարկելու կամ մաքսային մարմնի շենք կամ դրան փոխարինող այլ շինություն հասցնելու համար, երբ վերջիններիս վարքագիծը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք կարող են դիմել փախուստի, վնաս պատճառել իրենց կամ շրջապատին.

5) ենթադրյալ հանցանք կատարող կամ կատարած անձանց հայտնաբերելիս.

6) մաքսային հսկողության իրականացման շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից ապօրինի արտահանվող թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի եւ յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ.

7) ապացուցողական գործողությունների եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման շրջանակներում՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի եւ յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ:

2. Մաքսային մարմնի հանրային ծառայողները, որպես հատուկ միջոցներ, կարող են կիրառել՝

1) ռետինե մահակներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

2) արցունքաբեր, գրգռիչ նյութեր, ծխաքողարկող միջոցներ, ռետինե գնդակներով փամփուշտներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

3) ձեռնաշղթաներ՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ եւ 4-րդ կետերով նախատեսված դեպքերում.

4) ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

5) էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

6) հատուկ ներկող նյութեր՝ սույն հոդվածի առաջին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքերում.

7) ծառայողական շներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-4-րդ եւ 5-7-րդ կետերով նախատեսված դեպքերում:

3. Ծառայողական շների կիրառման, վարժեցման եւ պահման կարգը հաստատվում է մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:

4. Հատուկ միջոցների բոլոր տեսակները կարող են կիրառվել նաեւ սույն օրենքի 29-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում:

5. Արգելվում է հատուկ միջոցները կիրառել հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների եւ անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին, առողջությանն սպառնացող խմբակային հարձակման դեպքերի), դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայացուցչությունների տարածքներում (բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ միջոցները կիրառվում են դրանց լիազոր ներկայացուցիչների խնդրանքով), ինչպես նաեւ մարտավարատեխնիկական բնութագրերով պայթյունավտանգ հատուկ միջոցները՝ այն շենքերում (շինություններում), որտեղ արտադրվում կամ պահվում են դյուրավառ կամ պայթուցիկ նյութեր:

Հոդված 29. Զենքի կիրառումը (գործադրումը եւ օգտագործումը)

1. Մաքսային մարմնի հանրային ծառայողները իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս մաքսանենգության եւ մաքսային գործի հետ կապված այլ հանցագործությունների կանխման, խափանման, հայտնաբերման, բացահայտման ժամանակ իրավունք ունեն զենք գործադրել՝

1) քաղաքացիներին՝ նրանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հարձակումից պաշտպանելիս.

2) մաքսային մարմնի հանրային ծառայողի վրա կատարվող հարձակումը հետ մղելու համար, երբ նրա կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, ինչպես նաեւ նրա զենքին տիրանալու փորձը կանխելիս.

3) ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու պահին կամ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում բռնված եւ փախուստի փորձ

կատարող, ինչպես նաեւ զինված կամ խմբակային դիմադրություն ցույց տվող անձանց ձերբակալելիս.

4) մաքսային մարմնի տնօրինության տակ գտնվող շենքերի, շինությունների եւ տարածքների վրա, ինչպես նաեւ մաքսային մարմնի հանրային ծառայողի կողմից իրականացվող ուղեկցման եւ ապրանքների տեղափոխման ժամանակ խմբային կամ զինված հարձակումը հետ մղելիս:

2. Մաքսային մարմնի հանրային ծառայողներն իրավունք ունեն զենք օգտագործել՝

1) մարդկանց կյանքին, առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասազերծելիս.

2) զենք օգտագործելու կամ գործադրելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տագնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս:

3. Արգելվում է զենքի գործադրումը հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների եւ անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից քաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման եւ զինված դիմադրության դեպքերի), ինչպես նաեւ երբ զենքի գործադրումից կարող են տուժել այլ անձինք:

4. Մաքսային մարմնի սպառազինության մեջ կարող են ընդգրկվել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված զենքի համապատասխան տեսակներ: Մաքսային մարմնի սպառազինության մեջ ընդգրկվող զենքի տեսակները՝ ըստ մաքսային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների, պաշտոնների եւ ծառայողական պարտականությունների, սահմանվում են մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:

5. Մաքսային մարմնի ստորաբաժանումներում գտնվող զենքի հաշվառումը, մաքսային մարմնի հանրային ծառայողներին՝ ըստ գործառույթների, զենք տալու, նրանց կողմից զենքը հանձնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

Կ-1099[1]-03.06.2025-ՏՀ-011/1

Երկրորդ~~Առաջին~~ ընթերցում
Լրամշակված նախագիծ

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մաքսային ծառայության մասին»2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-402-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «հրազեն» բառը փոխարինել «զենք» բառով:

Հոդված 2. Օրենքի 26-րդ, 28-րդ եւ 29-րդ հոդվածները շարադրել նոր խմբագրությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 26. Մաքսային մարմնի հանրային ծառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու զենքի կիրառման հիմքերը, պայմանները եւ սահմանները

1~~7~~. Մաքսային մարմնի հանրային ծառայողներին թույլատրվում է իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կրել եւ պահել օրենքով նախատեսված զենք ու հատուկ միջոցներ: Նրանք իրավունք ունեն սույն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով ֆիզիկական ուժ, ինչպես նաեւ հատուկ միջոցներ եւ զենք կիրառել: Նախքան հատուկ միջոցների եւ զենքի կիրառման իրավասություն ստանալը մաքսային մարմնի հանրային ծառայողները, մաքսային մարմնի ղեկավարի սահմանած կարգով անցնում են հատուկ պատրաստություն (ուսուցում):

2~~8~~. Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ եւ զենք կիրառելու նպատակահարմարությունը դիտարկելիս, ինչպես նաեւ տեսակի ընտրությունը կատարելիս մաքսային մարմնի հանրային ծառայողն առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից:

3~~9~~. Մաքսային մարմնի հանրային ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ եւ զենք կիրառելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք կիրառելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու եւ ենթադրյալ հանցագործությունը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց կիրառման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ մաքսային մարմնի հանրային ծառայողի կյանքի, առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետեւանքներ:

4~~10~~. Իրավախախտման վտանգավորության աստիճանից եւ դա կատարող անձի ինքնությունից, ինչպես նաեւ դիմադրության ուժից ելնելով՝ վտանգի վերացմանն ուղղված գործողությունների

հետեւանքով հնարավոր վնասները մաքսային մարմնի հանրային ծառայողը պետք է հասցնի նվազագույնի:

5~~11~~. Օրենքով չնախատեսված դեպքերում մաքսային մարմնի հանրային ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ զենքի կիրառումը կամ սահմանների անցումով դրանց կիրառումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

6~~12~~. Մաքսային մարմնի հանրային ծառայողն իր կողմից զենքի կիրառման յուրաքանչյուր դեպքի, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կիրառելու հետեւանքով մարմնական վնասվածքի կամ մահվան բոլոր դեպքերի մասին վերադասության կարգով անհապաղ գրավոր տեղեկացնում է մաքսային մարմնի ղեկավարին, իսկ վերջինս էլ ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կիրառելու հետեւանքով մարմնական վնասվածքի կամ մահվան բոլոր դեպքերի մասին անհապաղ տեղեկացնում է ~~<<~~ գլխավոր դատախազին:

Հոդված 28. Հատուկ միջոցների կիրառումը

1~~5~~. Հատուկ միջոցները ~~Կոմիտեի~~ մաքսային մարմնի սպառազինության մեջ ընդգրկված եւ սույն օրենքով նախատեսված տեխնիկական միջոցները (սարքերը, սարքավորումները, առարկաները, նյութերը) կամ ծառայողական շներն են, որոնց հիմնական նշանակությունը մարդկանց նկատմամբ անմիջական ֆիզիկական, հոգեբանական կամ նյութական օբյեկտների, տրանսպորտային միջոցների նկատմամբ անմիջական ֆիզիկական ներգործությունն է: Իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս մաքսային մարմնի հանրային ծառայողները հատուկ միջոցներ կարող են կիրառել՝

1~~6~~) իրենց եւ (կամ) այլ անձանց վրա կատարված հարձակումը խափանելիս.

2~~7~~) ենթադրյալ հանցանքի կատարման պահին կամ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում բռնված եւ փախուստի փորձ կատարող անձանց բռնելիս.

3~~8~~) երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձը կամ անձինք պատրաստվում են զինված դիմադրություն ցույց տալ.

4~~9~~) դիմադրություն ցույց տվող իրավախախտին վարչական ձերբակալության ենթարկելու կամ մաքսային մարմնի շենք կամ դրան փոխարինող այլ շինություն հասցնելու համար, երբ վերջիններիս վարքագիծը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք կարող են դիմել փախուստի, վնաս պատճառել իրենց կամ շրջապատին.

5~~10~~) ենթադրյալ հանցանք կատարող կամ կատարած անձանց հայտնաբերելիս.

6~~11~~) մաքսային հսկողության իրականացման շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից ապօրինի արտահանվող թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի եւ յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ.

7~~12~~) ապացուցողական գործողությունների եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման շրջանակներում՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց

պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի եւ յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ:

26. Մաքսային մարմնի հանրային ծառայողները, որպես հատուկ միջոցներ, կարող են կիրառել՝

18) ռետինե մահակներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

29) արցունքաբեր, գրգռիչ նյութեր, ծխաքողարկող միջոցներ, ռետինե գնդակներով փամփուշտներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

310) ձեռնաշղթաներ՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ եւ 4-րդ կետերով նախատեսված դեպքերում.

411) ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

512) էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

613) հատուկ ներկող նյութեր՝ սույն հոդվածի առաջին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքերում.

714) ծառայողական շներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-4-րդ եւ 5-7-րդ կետերով նախատեսված դեպքերում:

37. Ծառայողական շների կիրառման, վարժեցման եւ պահման կարգը հաստատվում է մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:

48. Հատուկ միջոցների բոլոր տեսակները կարող են կիրառվել նաեւ սույն օրենքի 29-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում:

59. Արգելվում է հատուկ միջոցները կիրառել հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների եւ անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին, առողջությանն սպառնացող խմբակային հարձակման դեպքերի), դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայացուցչությունների տարածքներում (բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ միջոցները կիրառվում են դրանց լիազոր ներկայացուցիչների խնդրանքով), ինչպես նաեւ մարտավարատեխնիկական բնութագրերով պայթյունավտանգ հատուկ միջոցները՝ այն շենքերում (շինություններում), որտեղ արտադրվում կամ պահվում են դյուրավառ կամ պայթուցիկ նյութեր:

Հոդված 29. Զենքի կիրառումը (գործադրումը եւ օգտագործումը)

13. Մաքսային մարմնի հանրային ծառայողները իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս մաքսանենգության եւ մաքսային գործի հետ կապված այլ հանցագործությունների կանխման, խափանման, հայտնաբերման, բացահայտման ժամանակ իրավունք ունեն զենք գործադրել՝

1) քաղաքացիներին՝ նրանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հարձակումից պաշտպանելիս.

2) մաքսային մարմնի հանրային ծառայողի վրա կատարվող հարձակումը հետ մղելու համար, երբ նրա կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, ինչպես նաեւ նրա զենքին տիրանալու փորձը կանխելիս.

3) ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու պահին կամ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում բռնված եւ փախուստի փորձ կատարող, ինչպես նաեւ զինված կամ խմբակային դիմադրություն ցույց տվող անձանց ձերբակալելիս.

4) մաքսային մարմնի տնօրինության տակ գտնվող շենքերի, շինությունների եւ տարածքների վրա, ինչպես նաեւ մաքսային մարմնի հանրային ծառայողի կողմից իրականացվող ուղեկցման եւ ապրանքների տեղափոխման ժամանակ խմբային կամ զինված հարձակումը հետ մղելիս:

24. Մաքսային մարմնի հանրային ծառայողներն իրավունք ունեն զենք օգտագործել՝

1) մարդկանց կյանքին, առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասազերծելիս.

2) զենք օգտագործելու կամ գործադրելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տագնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս:

3. Արգելվում է զենքի գործադրումը հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների եւ անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից քաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման եւ զինված դիմադրության դեպքերի), ինչպես նաեւ երբ զենքի գործադրումից կարող են տուժել այլ անձինք:

4. ~~Կոմիտեի~~ Մաքսային մարմնի սպառազինության մեջ կարող են ընդգրկվել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված զենքի համապատասխան տեսակներ: ~~Կոմիտեի~~ մաքսային մարմնի սպառազինության մեջ ընդգրկվող զենքի տեսակները՝ ըստ ~~Կոմիտեի~~ մաքսային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների, պաշտոնների եւ ծառայողական պարտականությունների, սահմանվում են մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:

5. Մաքսային մարմնի ստորաբաժանումներում գտնվող զենքի հաշվառումը, մաքսային մարմնի հանրային ծառայողներին՝ ըստ գործառույթների, զենք տալու, նրանց կողմից զենքը հանձնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:»:

Հոդված 3. ~~**Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ**~~

13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2.Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-1099-03.06.2025-ՏՀ-011/1), «ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-1099[1]-03.06.2025-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**««Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	««Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածում առաջարկում ենք շտկել «Հարկային ծառայության մասին» օրենքի հերթական համարի վրիպակը՝ «ՀՕ-402» թիվը փոխարինել «ՀՕ-407» թվով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**««Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված** **««Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 30-րդ հոդվածի 6-րդ մասում առաջարկում ենք «ՀՀ» հապավումը հանել՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաեւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը: Նույն առաջարկությունը վերաբերելի է նաեւ «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով «Մաքսային ծառայության մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 26-րդ հոդվածի 12-րդ մասում (ըստ ճիշտ համարակալման 6-րդ մասի) նշված «ՀՀ» հապավմանը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

3.	ՀՀ կառավարություն	**««Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված** **««Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 32-րդ հոդվածի 1-ին մասում, ինչպես նաև Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 33-րդ հոդվածի 4-րդ մասում առաջարկում ենք «Կոմիտեի» բառը փոխարինել «հարկային մարմնի» բառերով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում նշված է. Հարկային մարմինը Պետական եկամուտների կոմիտեն է (այսուհետ՝ հարկային մարմին): Սույն առաջարկությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից: Նույն առաջարկությունը վերաբերելի է նաեւ «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 28-րդ հոդվածի 5-րդ մասում (ըստ ճիշտ համարակալման 1-րդ մաս), ինչպես նաև Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 29-րդ հոդվածի 4-րդ մասում նշված «Կոմիտեի» բառերին:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	**««Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված** **««Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ**	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»: Նույն առաջարկությունը վերաբերելի է նաեւ «Մաքսային ծառայության մասին» օրենքում	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի վերնագրին:		
5.	ՀՀ կառավարություն	**««Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ**	Առաջարկում ենք ապահովել «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով «Մաքսային ծառայության մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 26-րդ, 28-րդ եւ 29-րդ հոդվածների մասերի, ինչպես նաև նախագծի 3-րդ հոդվածի համարակալման հաջորդականությունը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: